ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թ. կարիքների համար ***համակարգչային տեխնիկայի*** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» հոկտեմբերի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝

Նվարդ Հովհաննիսյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետի պարտականությունները կատարող

հանձնաժողովի անդամներ՝
Տիգրան Խաչատրյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող

Տիգրան Հակոբյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության համակարգչային ցանցի ադմինիստրատոր

հանձնաժողովի քարտուղար՝
Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկատվություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՋԻ ՋԻ ԿՈՆՅԵՌՆ և «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

1.1 «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

1.2 «*ՋԻ ՋԻ ԿՈՆՅԵՌՆ*» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունը 1-ին չափաբաժնի մասով, իսկ 6-րդ չափաբաժնի մասով ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագիրը բացակայում է: Հաշվի առնելով վերոգրյալը մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը 1-ին չափաբաժնի համար գնահատվում են բավարար, իսկ 6-րդ չափաբաժնի մասով՝ գնահատվում են անբավարար և մերժվում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը ***որոշեց.***

-1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «***ՋԻ ՋԻ ԿՈՆՅԵՌՆ***» ՍՊԸ-ին,
-2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «**ԿՈՄՊԳԱՐԱՆՏ**» ՍՊԸ-ին,

-3, 4, 5 և 6-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագրեր, իսկ 6-րդ չափաբաժնի մասով «ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի վերաբերյալ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ **Նվարդ Հովհաննիսյան**

Անդամներ՝ _____ **Տիգրան Խաչատրյան**

_____ **Տիգրան Հակոբյան**

Քարտուղար՝ _____ **Օֆելյա Ասատրյան**